Արձանագրություն 6

«ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ձևով քիմիական նյութերի գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 21 մարտի 2018թ.
Անցկացման ժամը՝ 14:00
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արշակ Պետրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Անահիտ Ասատրյան
	Թամարա Հովսեփյան
	Տաթևիկ Շիրինյան
	Մարինե Յախշյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Գևորգ Խանոյան

I. «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Արշակ Պետրոսյան)

20 մարտի 2018թ. նիստի որոշմամբ «Վիոլա» ՍՊԸ-ն N 2 և N 6 չափաբաժինների մասով ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, և մասնակցին առաջարկվել էր երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.03.2018թ.) N 2 և N 6 չափաբաժինների մասով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել են վերոնշյալ փաստաթղթերը:

II. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Արշակ Պետրոսյան)

1.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Վիոլա» ՍՊԸ-ի N 2 և N 6 չափաբաժինների մասով ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն

ամփոփեց ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	Գնահատման չափանիշը	Գնահատականը	Գնահատման արդյունքը
			«Վիոլա» ՍՊԸ
1.	Հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ	Բավարար Անբավարար	N 2 և N 6 չ/բ Բավարար
Ընդհանուր գնահատականը		**Բավարար Անբավարար**	**Բավարար**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Մեդիտեք» ՍՊԸ-ի, «Մաունթ» ՍՊԸ-ի, «Դելտա» ՍՊԸ-ի, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Լինարե» ՍՊԸ-ի, «Ռոմա» ՍՊԸ-ի, «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ի, «Մեդիսար» ՍՊԸ-ի և «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հայտարարել ընտրված մասնակիցներ՝

ա) ընտրված (հաղթող) մասնակիցներ են ճանաչվել.

- N 1, N 2, N 3, N 5, N 6, N 8-11, N 13, N 14, N 23, N 39-46, N 51, N 52, N 57, N 64, N 65, N 68, N 71, N 72 և N 81 չափաբաժինների համար «Վիոլա» ՍՊԸ-ն:
- N 4, N 15, N 16 և N 18-22 չափաբաժինների համար «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն:
- N 7 և N 75 չափաբաժինների համար «Ռոմա» ՍՊԸ-ն:
- N 12 չափաբաժնի համար «Դելտա» ՍՊԸ-ն:
- N 24-30 և N 32-37 չափաբաժինների համար «Պրոմ-տեստ» ՍՊԸ-ն:
- N 31 չափաբաժնի համար «Մեդիսար» ՍՊԸ-ն:
- N 47-50, N 53, N 55, N 58-61 չափաբաժնի համար «Լինարե» ՍՊԸ-ն:
- N 54, N 56, N 62, N 63, N 66, N 67, N 70, N 74, N 76-80 և N 82 չափաբաժինների համար «Մեդիտեք» ՍՊԸ-ն:
- N 69 չափաբաժնի համար «Մաունթ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Արշակ Պետրոսյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակից ճանաչել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

բ) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (23.03.18թ. մինչև 27.03.18թ.):

գ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

IV. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(նախագահ՝ Արշակ Պետրոսյան)

3.1 «ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով քիմիական նյութերի գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Պետրոսյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Ա.Ասատրյան	_____ (ստորագրություն)
	Թ.Հովսեփյան	_____ (ստորագրություն)

Տ.Շիրինյան _____

(ստորագրություն)

Մ.Յախշյան _____

(ստորագրություն)

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ.Խանոյան _____

(ստորագրություն)